

1177-ին (1) փոխեցին ծխական եկեղեցիի (2) . բայց այս եւս նեղ դալով հաւատացեալ բազմութեան , մանաւանդ թէ թագաւորներն ալ իրենց պալատներն այս եկեղեցիին քովերը հաստատեցին , իրենց պալատներու համեմատութեամբ եկեղեցին ալ վերածեցին մեծ տաճարի մը , որ նոյնպէս 1797-ին յեղափոխական մուրճին տակ ինկաւ կործանեցաւ , եւ անհետացաւ ի սպառ (3) : Բայց ետքէն Յիսուսեան կրօնաւորներն ասոր մօտ Ս. Լուի անունով եկեղեցի մը կանգնելով՝ կործանուած եկեղեցիի յիշատակին՝ անունը փոխեցին ի Saint-Paul-Saint-Louis, որ մինչեւ հիմայ կանգուն կը մնայ Սէն-տ-Անտուան փողոցին վրայ :

Նախկին Ս. Պօղոս եկեղեցին բռնած էր՝ համանուն փողոցին հիմակուան 30-34 թուահամարները կրող շէնքերու տեղերը , Հանսի-ի ցուցումին նայելով , իսկ Մենորվալ-ի համաձայն՝ 28-30 թուերը կրող շէնքերու տեղերը : Այս Ս. Պօղոս եկեղեցիին քովը կարողոս Ե (1337-1380) գահը բարձրանալէն առաջ շինել տուած էր արքայական բնակարան մը , որ եկեղեցիին անունովը կոչուեցաւ Պալատ Ս. Պօղոսի (Hôtel de Saint-Paul), զոր ետքէն իրեն յաջորդները մեծապէս ընդարձակեցին , մօտակայ շէնքերն ալ գնելով եւ միացնելով անոր (4) : Ուստի թերեւս ճիշտ ըլլան Մենորվալ-ի եւ Հանսի-ի տուած թուերն այս տարբերութեամբ , որ Մենորվալ-ի մասնակց ըրած 28-30 թուերուն տեղերը բուն իսկ եկեղեցիին համար ընդունելու է , իսկ Հանսի-ի 30-34 թուերը՝ պալատին տեղին համար : Այս ընդարձակ պալատին յիշատակութիւնը կըլլայ մինչեւ 1717 , երբ Մեծն Պետրոս կայցելէ Պարիս եւ կը բնակի ասոր մէջ (5) : Անկէ վերջը ամբողջ շէնքը կը վաճառուի մաս մաս ու կը քանդուի , մէկ մասը փողոցի իսկ միւս մասն ուրիշ այլ եւ այլ շէնքերու վերածուելով :



(1) Piganiol 1107-ից կը դնէ իր հետեւեալ գործին մէջ . *Description de la ville de Paris*. Paris, 1765, թ. 7, եր. 155 :

(2) D. de Hansy, *Notice historique sur la Paroisse royale St-Paul St-Louis*. Paris, 1842, եր. 5-6 :

(3) Անդ , եր. 8 :

(4) Piganiol, *Description etc.*, թ. 7, եր. 172 :

(5) Անդ , եր. 180 :